ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է <<ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2/2018Ն-3-1>> ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2017թ նոյեմբերի 29-ին կնքված պայմանագրում 2018թ հունվարի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:	Ֆինանսական միջոցների նախատեսում
Փոփոխության նկարագրություն:	2018թ-ի շինարարական աշխատանքների ֆինասական միջոցների նախատեսում, Համաձայնագրի գինը կազմում է 1,140,000.00 ՀՀ դրամ
Փոփոխության հիմնավորում:	*ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1717-Ն որոշում/:* *ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2/2018Ն-3-1
Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման

ք. Երևան <<28>> հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տրանսնախագիծ» ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ դեկտեմբերի 29-ի թիվ 1717 որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ընդունելով 2017թ. նոյեմբերի 29-ին կնքված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2/2018Ն-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված «Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Պայմանագրի N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված <<Աշխատանքի կատարման ժամկետը>> սյունակում <<պայմանագրով>> բառերը փոխարինել <<համաձայնագրով>> բառերով:

բ) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի <<Աշխատանքի կատարման ժամկետի սկիզբը>> սյունակում <<Պայմանգիրը ուժի մեջ մտնելուց հետո>> բառերը փոխարինել <<ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրը>> բառերով, իսկ <<Աշխատանքի կատարման ժամկետի ավարտը>> սյունակում <<պայմանագրով>> բառը փոխարինել <<համաձայնագրով>> բառով :

1.3 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

2 Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1140000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011005718 ՀՎՀՀ 02565518	<<Տրանսնախագիծ>> ՓԲԸ Ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23 ՝՝Արդշինբանկ՝՝ ՓԲԸ Հ/Հ 247010001763 ՀՎՀՀ 00802905
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված
<< >> 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2/2018Ն-3-1 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	«Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000	1140000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005718
ՀՎՀՀ 02505518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Տրանսնախագիծ>> ՓԲԸ
Ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247010001763
ՀՎՀՀ 00802905

(ստորագրություն)

Կ.Տ.